ՍԱՂՄՈՍ 20

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թշնամիների վրա հաղթանակի աղոթք MT ներածություն Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը	Աստծո փրկագործության երաշխիքը	Աղոթք պատերազ-մում Թագավորի հաղթանակի համար	Հաղթանակի աղոթք	Աղոթք Թագավորի համար
20:1-3	20:1-3	20:1-3	20:1-5	20:1-2
				20:3-4
20:4-5	20:4-5	20:4-5		
				20:5ա
				20:5բ
20:6-9	20:6	20:6-8	20:6-8	20:6
	20:7-8			20:7-8
	20:9	20:9	20:9	20:9

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հնարավոր է, որ սա եղել է պատերազմի գնալիս օրհներգ նախերգանք, ինչպես որ Սաղմոս 21-ը պատերազմից հաղթանակած վերադարձող թագավորին և զորաբանակին դիմավորելու օրհներգ է:

Բ. Սաղմ. 20:3-ի պատարագները (այսինքն՝ «միս» և «ճարպ») հնարավոր է եղել են պատերազմից առաջ մատուցվող անհրաժեշտ զոհի պատարագները:

Գ. Սաղմոս 20:5-ի երգը՝ աղաղակը և դրոշակը հնարավոր է հաղթանակած թագավորին դիմավորելիս ակնկալվող կերպերն են: Սաղմոս 21-ը հավանաբար հենց Սաղմ. 20:5-ին վերաբերող երգն է:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 20:1-3
[1]Նեղության օրը ՏԵՐԸ լսի քեզ,
Հակոբի Աստծո անունը քեզ պաշտպանի:
[2]Օգնություն ուղարկի քեզ սրբարանից
Ու Սիոնից զորացնի քեզ:
[3]Քո բոլոր պատարագները հիշի
Եվ քո ողջակեզներն ընդունի: Սելա

20:1-3,4-5 Այս պարբերությունը աղոթք է, ինչպես Սաղմ. 20:4-5-ը, աղերս ՅԱՀՎԵԻՆ օգնելու Իր հետ ուխտի մեջ եղող մարդկանց (այսինքն՝ Դավթի սերնդի թագավորին, տես՝ 1 Թագ. 8:7, 10:19) պատերազմում (տես՝ Սաղմ. 20:5,7):

Ուշադրություն դարձրեք ԱՆԿԱՏԱՐԱՆԵՐԻ շարքին, որոնք կիրառված են ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (տես՝ NASB, NRSV, REB, NIV, JPSOA, այսինքն՝ աղոթքի խնդրանքներ) Սաղմ. 20:1-5-ում:

1. Թող ՏԵՐԸ լսի քեզ /պատասխանի քեզ/ - BDB 772, KB 851, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. Թող Հակոբի Աստծո անունը քեզ պաշտպանի – BDB 960, KB 1305, *PIel* ԱՆԿԱՏԱՐ
3. Թող օգնություն ուղարկի քեզ սրբարանից – BDB 1018, KB 1511, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
4. Սիոնից զորացնի քեզ – BDB 703, KB 761, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
5. Քո բոլոր (ուտելու) պատարագները հիշի – BDB 269, KB 269, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
6. Թող սրտիդ համեմատ քեզ տա – BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 21:2, 37:4:
7. Կատարի քո բոլոր խորհուրդները՝ նպատակները – BDB 569, KB 583, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
8. ՏԵՐԸ կատարի քո բոլոր խնդրածները – նույն ինչ #7:

20:1 «Նեղության օրը» Սա պարբերաբար կրկնվող արտահայտություն է (տես՝ Ծննդ. 35:3, 4 Թագ. 19:3, Սաղմ. 50:15, 77:2, 86:7, Առակ. 24:10, 25:19, Ես. 37:3, Երեմ. 16:19, Ոբդ. 1:12,14, Նավում 1:7, Ամբ. 3:16): Այն վերաբերում է կյանքի տարբեր խնդիրներին, որոնք առկա են այս մեղավոր՝ անկում ապրած աշխարհում: Նորությունն այն է, որ Աստված տեղյակ է մեր խնդիրների մասին (այսինքն՝ Ելից 3:7-8) և մեզ հետ է այդ բոլոր խնդիրների մեջ: Նա է բոլոր մարդկանց կարիքների պատասխանը և հրաշալի կերպով հետամուտ է լինում մեզ:

«Օր» տերմինը (BDB 398) ունի մի քանի նշանակություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐ (*YOM*, BDB 398, KB 399)
SPECIAL TOPIC: DAY (*YOM*, BDB 398, KB 399)

Yom (օր՝ Ծննդոց 1) տերմինի նշանակության տեսությունները, որ վերցված և որդեգրված են Դոկ. Ջոն Հարրիսի /Dr. John Harris/ (Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարանի Քրիստոնեական Դասընթացների Դպրոցի դեկան և ՀԿ-ի դասախոս) ՀԿ-ի Ուսումնասիրություն I նշումներից՝

1. Բառացի քսանչորս ժամյա տևողության տեսությունը
   Սա անմիջական՝ ուղղակի մոտեցում է (տես՝ Ելից 20:9-11): Այս մոտեցման արդյունքում հարցեր են առաջանում.
   ա. Ինչպե՞ս կարող էր լույս լինել առաջին օրը, երբ արևը մինչև չորրորդ օրը դեռ չէր ստեղծվել:

բ. Ինչպե՞ս էր հնարավոր մեկ օրից էլ քիչ ժամանակի մեջ բոլոր կենդանիներին (հատկապես նրանց, որոնք աշխարհի այլ վայրերին են բնորոշ) անուն դնել (տես՝ Ծնն. 2:19-20):

2. Օր - Հազարամյակ տեսությունը

Այս տեսությունը փորձում է ներդաշնակության մեջ բերել գիտությունը (հատկապես կենսաբանությունը) Սուրբ Գրքի հետ: Այս տեսությունն ասում է, որ «օրերը» «կենսաբանական դարաշրջաններ» էին իրենց տևողությամբ: Դրանց տևողությունը անհավասար է և նրանք մոտեցնում են համաչափ երկրաբանության մեջ նկարագրված զանազան շերտերը: Գիտնականները հակված են համաձայնելու Ծննդոց 1-ի ընդհանուր զարգացումների հետ. գոլորշի և ջրային զանգված է նախորդել ցամաքի և ծովի բաժանմանը, նախքան երկրի վրա կհայտնվեր կյանքը: Բուսական աշխարհը ստեղծվել է կենդանական աշխարհից առաջ, իսկ մարդը ներկայացրել է ամենավերջին և ամենաբարդ կյանքի տեսակը: Այս մոտեցումն ինքնին հարցեր է առաջ քաշում:

ա. Ինչպե՞ս են բույսերը գոյատևել «դարեր» շարունակ առանց արևի:

բ. Ինչպե՞ս էր բուսական աշխարհը վերապրում փոշոտումը, եթե «դարեր» անց նոր հայտնվեցին միջատները և թռչունները:

3. Իրար հաջորդող Հազարամյակ – Օր տեսությունը

Իրականում օրերը քսանչորս ժամ տևողությամբ են, սակայն յուրաքանչյուր օրը մյուսից բաժանվում է հազարամյակներով, որի ընթացքում այն ինչ ստեղծվել էր, զարգանում էր: Հարցեր են ծագում այսպիսի մոտեցումից.

ա. Միևնույն խնդիրներն են ծագում ինչպես և Օր- Հազարամյակ տեսության մեջ է:

բ. Արդյո՞ք տեքստը նշում է «օր» բառը, որպեսզի այն հասկացվի թե՛ քսանչորս ժամերը և թե՛ մի ամբողջ հազարամյակ:

4. Կատարելագործվող Արարչագործություն – Աղետ տեսությունը

Այս տեսությունը հետևյալ կերպ է բացատրվում. Ծննդոց 1:1-ի և 1:2-ի միջև գոյություն ունի մի անորոշ ժամանակահատված, որի ընթացքում երկրաբանական հազարամյակներ են անցել. այս ընթացքում, համաձայն հանածոների տված հերթականության ստեղծվել են նախապատմական արարածներ. մոտ 200,000 տարի առաջ մի գերբնական աղետ է տեղի ունեցել և բնաջնջել այս մոլորակի վրա գոյություն ունեցող կյանքի մեծ մասը և շատ կենդանիների վերացրել. դրանից հետո սկսել են Ծննդոց 1-ի օրերը: Այս օրերը ավելի շուտ վերաբերում են վերաստեղծմանը, քան թե սկզբնական արարչագործությանը:

5. Միայն Եդեմ տեսությունը

Ստեղծագործության պատմությունը վերաբերում է միայն Եդեմի Պարտեզի արարչագործությանն ու ֆիզիկական ասպեկտներին:

6. Ճեղքման տեսությունը

Ծննդոց 1:1-ի հիման վրա Աստված ստեղծեց կատարյալ աշխարհ: Ծննդոց 1:2-ի հիման վրա, Արյուսակը (Սատանան) դրվեց պատասխանատու այս աշխարհի վրա և ապստամբեց: Ապա Աստված դատեց Արյուսակին և աշխարհը՝ այն բնաջնջելով: Միլիոնավոր տարիներ շարունակ աշխարհը թողնվեց այդպես և երկրաբանական հազարամյակներն անցան: Ըստ Ծննդոց 1:3-2:3-ի Ք.Ա. 4004 թ-ին տեղի ունեցան վերաստեղծման վեց տառացի քսանչորս ժամյա օրերը: Եպիսկոպոս Աշերը (Bishop

Ussher, մ. թ. 1654) կիրառում էր Ծննդոց 5-ի և 11-ի սերնդաբանությունները, որպեսզի հաշվի և թվագրի մարդկության արարումը՝ Ք. Ա. 4004: Սակայն սերնդաբանությունները չեն ներկայացնում ժամանակագրական լիարժեք սանդղակները:

7. Սուրբ Շաբաթի Տեսությունը

Ծննդոց գրքի հեղինակը կիրառել է օրերի և մեկ շաբաթի հասկացությունը որպես բառացի միջոց արարչագործության մեջ Աստծո գործողությունների սուրբ ուղերձը ներկայացնելու համար: Այսպիսի կառուցվածքը լուսաբանում է Աստծո արարչագործության գեղեցկությունն ու համաչափությունը՝ ներդաշնակությունը:

8. Տիեզերական Տաճարի Հանդիսավոր Բացումը

Սա Ջոն Հ. Ուոլթնի, *Ծննդոց Մեկի Կորած Աշխարհը*, (John H. Walton, *The Lost World of Genesis One*, IVP, 2009) գրքից վերջին տեսակետն է, որը վեց օրերը դիտարկում է որպես «ֆունկցիոնալ գոյաբանություն և ոչ թե նյութական գոյաբանություն՝ օնտոլոգիա»: Նրանք բնութագրում են Աստծուն որպես մարդկության բարօրության համար գործող տիեզերք ստեղծող կամ կարգադրող: Սա համապատասխանում է մյուս հնագույն տիեզերագիտություններին: Օրինակ, առաջին երեք օրերը ներկայացնում են Աստծուն որպես «եղանակները» (այսինքն՝ ժամանակը), «եղանակը» (այսինքն՝ բերքի համար) և «սնունդը» ապահովողի՝ ստեղծողի: «Բարի է» կրկնվող արտահայտությունը մատնանշում է ֆունկցիոնալ վիճակը:

Յոթներորդ օրը նկարագրում է Աստծուն Իր լիարժեք գործող և բնակեցված «տիեզերական տաճարը» մտնելիս, որպես դրա օրինական սեփականատեր, վերահսկող և տնօրինող: Ծննդոց 1-ը ոչ մի կապ չունի մատերիայի նյութական արարչագործության հետ, այլ այդ մատերիային հրամայելու հետ, որ դառնա Աստծո և մարդկության փոխհարաբերության համար գործնական մի վայր:

«Օրերը» դառնում են գրականական միջոց, որպեսզի հաղորդեն ANE-ի ընդհանուր համաձայնությունը, որ՝

ա. տարբերություն չկա «բնականի» և «գերբնականի» միջև:

բ. Աստված ներգրավված է մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտի մեջ: Նրա մեծ նպատակը՝ աշխարհայացքը չի եղել Իսրայելի բացառիկությունը, այլ հետևյալը՝
   (1) նրա միաստվածությունը
   (2) Ստեղծագործությունը մարդկության համար էր և ոչ թե աստվածների
   (3) Իսրայելի պատմության մեջ չկա աստվածների միջև կամ աստվածների և մարդկանց միջև բախումներ

Նա ուրիշներից չի վերցրել իր արաչագործության պատմությունը, այլ կիսվել է իրենց ընդհանուր աշխարհայացքը:

«Օր» տերմինը սովորաբար վերաբերում է երկրագնդի պտույտի 24 ժամյա ցիկլին (այսինքն՝ Ելից 20:9-10), սակայն այն կարող է վերաբերել նաև ինչ-որ անորոշ ժամանակի (տես՝ Ծնն. 2:4, 5:2, Հռութ 1:1, Սաղմ. 50:15, 90:4, Ժող. 7:14, Եսայի 4:2, 11:2, Զաք. 4:10):

❖ **«Հակոբի Աստծո անունը»** Երկու Հատուկ Թեմաներ կան, որոնք լուսաբանում են այս արտահայտությունը:

1. <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>
2. <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ԱՆՈՒՆԸ</u>

❖

NASB	**«քեզ ապահով բարձր տեղերում կդնի»**
NKJV	**«կպաշտպանի քեզ»**
NRSV, TEV, NJB, LXX	**«կպահի քեզ»**
JPSOA	**«ապահով կպահի քեզ»**
REB	**«քո զորության աշտարակը կլինի»**

MT ԲԱՑԸ (BDB 960, KB 1305, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) «բարձր լինել» արմատից է, և հետևաբար անհասանելի և ապահով (տես՝ Սաղմ. 59:1, 69:29, 91:14, 107:41): Սա նույն տեսարանն է, որ բնութագրվում է Սաղմ. 18:2-ում՝ բարձր, պաշտպանիչ ամրոցի:

20:2 «սրբարանից . . . Սիոնից» Սա պոեզիայի հանգավորված զուգահեռ տողեր են: Երկուսն էլ վերաբերում են Երուսաղեմի տաճարին: Այն չի կառուցվել Դավթի օրոք, այլ դեռևս գործում էր խորանը: Երուսաղեմը տեղակայված էր յոթ բլուրների վրա. տաճարը կառուցված էր Մորիա լեռան վրա (տես՝ 1 Մնաց. 21:18, 2 Մնաց. 3:1): Սիոն լեռը Հեբրուսացիների ամրոցի տեղանքն էր, որը Դավիթը գրավեց (տես՝ 2 Թագ. 5:7, 1 Մնաց. 11:5), ինչպես նաև իր պալատի տեղանքն էր: Այն հետագայում սկսվեց գործածվել որպես անուն ամբողջ Երուսաղեմի համար, իսկ «Սիոնի աղջիկ» արտահայտությունը՝ Իսրայելի ժողովրդի համար (տես՝ 4 Թագ. 19:21):

Ուշադրություն դարձրե՛ք, որ Սաղմ. 20:6 կիրառում է «իր սուրբ Երկնքից» արտահայտությունը, որը մեկ այլ զուգահեռ է:

20:3 «Սելա» Տես՝ Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածությունը, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 20:4-5
[4]Սրտիդ համեմատ քեզ տա
Եվ կատարի քո բոլոր խորհուրդները:
[5]Քո փրկությամբ ենք ուրախանալու
Ու մեր Աստծո անունով դրոշակ վերցնելու:
ՏԵՐԸ կատարի քո բոլոր խնդրածները:

20:4 «քո սրտի ցանկությունը» Սա խաղաղության և վստահության աղբյուրն է: Դավթի Թագավորական պատշաճ ցանկության լավագույն օրինակներից մեկն է Սողոմոնի աղոթքը Տաճարի նվիրաբերման օրը (տես՝ 3 Թագ. 8:22-61):

20:5

NASB	**«ուրախությամբ երգելու ենք»**
NKJV, LXX	**«ցնծալու ենք»**
NRSV, TEV, JPSOA	**«կաղաղակենք ուրախությամբ»**
NJB	**«ուրախությամբ կարող ենք գոչել»**
REB	**«Եկեք բարձրաձայն երգենք քո փառքը»**

Այս ԲԱՑԸ (BDB 943, KB 1247, *Piel* ԸՂՁԱԿԱՆ) մատնանշում է «գոչյուն»՝ թե լավ և թե՛ վատ, համաձայն համատեքստի: Այստեղ նկարագրված է ՅԱՀՎԵԻ կողմից գրանցված ռազմական հաղթանակի վրա ցնծալը (տես՝ Սոփ. 3:14):

❖ **«մեր դրոշակները կբարձրացնենք»** Սա հետևում է נגד (BDB 186, KB 213, *Qal* ԱՆԿԱՏԱՐ [ՀԿ-ում տրված է միայն այստեղ] կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով): Հաղթանակով վերադարձող թագավորի և զորքի համար սա ակնկալվող դիմավորելու կերպ էր:

NET Աստվածաշունչը (էջ՝ 875) առաջարկում է շտկում մեկ այլ բայական արմատի נגיל – BDB 162 ՆԱԽԴԻՐՈՎ: NET Աստվածաշունչը առաջարկում է, որ սա ավելի լավ է համընկնում համազորությանը և նաև նշում Սաղմ. 89:16, որտեղ ԲԱՑԸ գործածվում է «Քո անունով» խոսքի հետ առնչությամբ:

❖ **«խնդրածները»** Այս հազվադեպ ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 982) ՀԿ-ում միայն երկու անգամ կարելի է գտնել՝ այստեղ և Սաղմ. 37:4-ում: ԲԱՅԱԿԱՆ արմատը (BDB 981) նշանակում է «խնդրել»: Արմատը հայտնվում է մի քանի անունների մեջ (տես՝ 1 Թագ. 9:2,3,5, 1 Մնաց. 1:48,49, 4:24, 6:24):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 20:6-9
[6]Հիմա հասկացա, թե ՏԵՐԸ փրկում է Իր օծյալին,
Նրան լսում է Իր սուրբ երկնքից՝
Իր աջ ձեռքի փրկարար զրությամբ:
[7]Ոմանք ապավինում են կառքերին և ոմանք էլ՝ ձիերին,
Բայց մենք մեր ՏԵՐ Աստծո անունն ենք հիշելու:
[8]Նրանք խոնարհվեցին ու ընկան,
Բայց մենք բարձրացանք և ուղիղ կանգնեցինք:
[9]Ո՛վ ՏԵՐ, փրկի՛ր, թող Թագավորը լսի մեզ,
Երբ կանչում ենք:

20:6-9 Սաղմոսերգուն (այսինքն՝ Թագավորը, որևէ քահանա կամ հավաքական ԵԶԱԿԻ անձ, Սաղմ. 20:9-ին ամենաշատը համապատասխանում է այս վերջին տարբերակը) հաստատում է իր վստահությունը, որ ՅԱՀՎԵՆ կպատասխանի ճիշտ կերպով:

1. հիմա հասկացա՝ գիտեմ – BDB 393, KB 390, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. ՅԱՀՎԵՆ փրկում է – BDB 446, KB 448, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ

ԲԱՅՆ արտահայտում է ամրապնդված վստահություն (տես՝ Սաղմ. 56:9, 118:6, Հռոմ. 8:31-39): ՅԱՀՎԵՆ լսելու և պատասխանելու է դրական պատասխանով (տես՝ Սաղմ. 20:6բ,գ): Թագավորը և ուխտի ժողովուրդը կազմում են ամբողջ մարդկության ավելի մեծ տիեզերական փրկագործության ծրագրի մի մասը: <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:</u>

20:6 «Նրա օծյալը» Սա եբրայերեն ԲԱՅ է «օծել» (BDB 603), որը հայտնի անուն դարձավ Աստծո կողմից Եկող Հատուկ Թագավորի համար (տես՝ Սաղմ. 2:2, 18:50): Տես Հատուկ Թեմաներ՝

1. <u>ՀԿ-ՅԱՆ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ԵԿՈՂԻ ՀԱՄԱՐ</u>
2. <u>ՄԵՍԻԱ</u>

❖ **«Նրա աջ ձեռքը»** Սա եբրայերեն դարձվածք է զորությամբ, իշխանությամբ գործելու համար: <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ</u>

20:7 «Պարծենալ» ԲԱՅԸ (BDB 269, KB 269, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) բառացիորեն նշանակում է «ստիպել հիշել»՝ ինչ-որ անցյալի դեպքի կամ օրհնության կամ անձով ուրախանալու կամ մեծարելու նշանակությամբ: Այն արտահայտում է այն, ինչին որ անձը վստահում է՝ ապավինում:

1. մարդկային զորությանը (այսինքն՝ կառքեր, ձիեր, զինվորներ, զենքեր, և այլն)
2. ՅԱՀՎԵԻՆ և Նրա խոստումներին

«Պարծենալու» գաղափարը Աստվածաշնչում կարևոր է. նկատե՛ք հատկապես Երեմ. 9:23-24: Տե՛ս այս հասկացության կիրառությունը Պողոսի թղթերում ստորև տրված Հատուկ Թեմայի մեջ:

Ահա մի քանի լավ զուգահեռ տեքստեր՝ 2 Օր. 20:1, 31:6,8, Դատ. 7:2, 1 Թագ. 17:45,47, 2 Մնաց. 20:17, 32:8, Սաղմ. 33:16,17, 44:2-3,4-8, 60:11-12, 146:3-7, 147:10, Առակ. 21:31, Ես. 31:3, Երեմ. 17:5, Զաք. 4:6: Ինչի՞ն եք դուք վստահում, ինչո՞վ եք դուք պարծենում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՐԾԵՆԱԼ
SPECIAL TOPIC: BOASTING

Հունարեն այս տերմինները *kauchaomai, kauchēma* և *kauchēsis* Պողոսը գործածում է երեսուն հինգ անգամ և միայն երկու անգամ գործածվում է ՆԿ-ի մյուս գրքերում (երկուսն էլ Հակոբոսի կողմից): Գերակշիռ կիրառությունը 1 և 2 Կորնթացիների թղթերում է:

Երկու հիմնական ճշմարտություններ կան պարծենալու հետ կապված՝

Ա. ոչ մի մարմին չի փառավորվելու՝ պարծենալու Աստծո առաջ (տես՝ 1 Կորնթ. 1:29, Եփես. 2:9)
Բ. հավատացյալները պետք է պարծենան Տիրոջով (տես՝ 1 Կորնթ. 1:31, 2 Կորնթ. 10:17, որը Երեմ. 9:23-24-ից մեջբերում է)

Հետևաբար, գոյություն ունի տեղին և անտեղի պարծենալ՝ փառավորվել (այսինքն՝ հպարտություն):

Ա. Տեղին՝
1. փառքի հույսով (տես՝ Հռոմ. 4:2)
2. Աստծով՝ Տեր Հիսուսի միջոցով (տես՝ Հռոմ. 5:11)
3. Տեր Հիսուսի խաչով (այսինքն՝ Պողոսի հիմնական թեման, տես՝ 1 Կորնթ. 1:17-18, Գաղ. 6:14)
4. Պողոսը պարծենում է՝
   ա. իր ծառայությունն առանց վարձատրության է (տես՝ 1 Կորնթ. 9:15,16)
   բ. Քրիստոսից իր ունեցած իշխանությամբ (տես՝ 2 Կորնթ. 10:8,12)
   գ. այլ մարդկանց աշխատանքով չի պարծենում (ինչպես Կորնթոսում ոմանք անում էին, տես՝ 2 Կորնթ. 10:15)
   դ. իր տոհմական ժառանգությամբ (ինչպես ուրիշներն էին անում Կորնթոսում, (տես՝ 2 Կորնթ. 11:17, 12:1,5,6)
   ե. իր եկեղեցիներով՝
      (1) Կորնթոսի (2 Կորթն. 7:4,14, 8:24, 9:2, 11:10)
      (2) Թեսաղոնիկեի (տես՝ 2 Թեսաղ. 1:4)
      (3) Աստծո մխիթարության և ազատագրման վրա ունեցած իր վստահությամբ (տես՝ 2 Կորնթ. 1:12)

Բ. Անտեղի՝
1. Կապված հրեական իր ժառանգության հետ (տես՝ Հռոմ. 2:17-23, 3:27, Գաղ. 6:13)
2. Կորնթոսի եկեղեցում ոմանք պարծենում էին՝
   ա. տղամարդկանցով (տես՝ 1 Կորնթ. 3:21)
   բ. իմաստությամբ (տես՝ 1 Կորնթ. 4:7)
   գ. ազատությամբ (տես՝ 1 Կորնթ. 5:6)
3. սուտ վարդապետները փորձում էին պարծենալ Կորնթոսի եկեղեցով (տես՝ 2 Կորնթ. 11:12):

20:8 Ուշադրություն դարձրե՛ք հակասական զուգահեռականությանը: Մեր խոսքերն ու մեր գործողություններն ունեն հետևանքներ:

20:9 «Փրկիր, ո՛վ ՏԵՐ» Սա բացականչական աղոթքի խնդրանք է (BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 3:7, 6:4, 17:13):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)</u>

❖ **«թող Թագավորը լսի մեզ, երբ կանչում ենք»** ԲԱՅԻ քերականական ձևը *Qal* ԱՆԿԱՏԱՐ է՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով: LXX և մի քանի անգլերեն թարգմանություններ սա դիտարկում են որպես Թագավորի համար ժողովրդի կողմից բարձրացված աղոթք (տես՝ Սաղմ. 20:6,

Սաղմ. 21:7, NRSV, TEV, NJB, REB) կամ «Թագավորը» կարող է վերաբերել ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Թարգումի *UBS Ձեռնարկը*, էջ՝ 202, նաև՝ Սաղմ. 98:6, 145:1):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: THE KINGDOM OF GOD

ՀԿ-ում ՅԱՀՎԵՆ (YHWH) համարվում էր Իսրայելի Թագավոր (տես՝ 1 Թագ.8:7, Սաղ.10:16, 24:7-9, 29:10, 44:4, 89:18, 95:3, Ես. 43:15, 44:4,6), իսկ Մեսիան՝ իդեալական թագավոր (տես՝ Սաղ.2:6, Ես.9:6-7, 11:1-5): Բեթլեհեմում Հիսուսի ծննդյամբ (մ.թ.ա. 6-4) Աստծո Թագավորությունը նոր իշխանությամբ և փրկությամբ (նոր ուխտ, տես՝ Երեմ.31:31-34, Եզեկ.36:27-36) մուտք գործեց մարդկության պատմություն: Հովհաննես Մկրտիչը հռչակում էր այդ թագավորության մոտալուտ լինելը (տես՝ Մատթ.3:2, Մարկ.1:15): Հիսուսը պարզ սովորեցնում էր, որ Թագավորությունը Իր և Իր ուսմունքի մեջ է (տես՝ Մատթ.4:17,23, 9:35, 10:7, 11:11-12, 12:28, 16:19, Մարկ.12:34, Ղուկ.10:9,11, 11:20, 12:31-32, 16:16, 17:21): Մինչդեռ այդ Թագավորությունը նաև ապագա Թագավորություն է (տես՝ Մատթ. 16:28, 24:14, 26:29, Մարկ.9:1, Ղուկ.21:31, 22:16,18):

Մարկոսի և Ղուկասի Սինոպտիկ զուգահեռների մեջ հանդիպում ենք «Աստծո Թագավորություն» արտահայտությունը: Հիսուսի ուսմունքների մեջ մեծ տարածում գտած այս թեման բովանդակում է Աստծո մարդկանց սրտերում տիրելու իմաստը, որը մի օր կտարածվի ամբողջ աշխարհով մեկ: Սա արտացոլվում է Մատթ.6:10-ում Հիսուսի աղոթքի մեջ: Մատթեոսը, գրելով հրեաներին, նախընտրել է մի արտահայտություն, որտեղ չի գործածվում Աստծո անունը (Երկնքի Արքայություն), մինչդեռ Մարկոսն ու Ղուկասը՝ գրելով հեթանոսներին, կիրառել են տարածված անվանումը՝ օգտագործելով աստվածության անունը:

Սա կարևոր արտահայտություն է Սինոպտիկ՝ համանման Ավետարաններում: Հիսուսի առաջին և վերջին քարոզները և Նրա առակների մեծամասնությունը գործ ունեին այս թեմայի հետ: Այժմ այն վերաբերում է Աստծո մարդկանց սրտերում թագավորելուն: Զարմանալի է, որ Հովհաննեսը այս արտահայտությունը գործածում է միայն երկու անգամ (և երբեք չի գործածում Հիսուսի առակների մեջ): Հովհաննեսի Ավետարանում «հավիտենական կյանք» խոսքն է բանալի փոխաբերությունը:

Այս արտահայտության հետ կապված լարվածություն է ստեղծվում Հիսուսի երկու գալստյան պատճառով: ՀԿ-ը կենտրոնանում է միայն Աստծո Մեսիայի մի գալստյան վրա՝ ռազմական, դատաստանի, փառավոր գալստյան, սակայն ՆԿ-ը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես Եսայի 53-ի Չարչարված Ծառան և Զաք.9:9-ի խոնարհ Թագավորը: Երկու հրեական դարաշրջանները՝ ամբարշտության դարաշրջանը և արդարության նոր դարաշրջանը, մասամբ համընկնում են: Հիսուսը ներկայումս տիրում է հավատացյալների սրտերում, սակայն մի օր տիրելու է ամբողջ ստեղծագործության վրա: Նա վերադառնալու է ՀԿ-ի կանխատեսության համաձայն: Հավատացյալները ապրում են Աստծո Թագավորության «ներկայում» ի հակադրություն դրա «ապագայի» (տես՝ Գորդն Դ. Ֆիի և Դուգլաս Ստյուարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ՝ 131-134 /Gordon D. Fee and Douglas Stuart's *How to Read The Bible For All Its Worth*/):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԱՐՉԱՐՎՈՂ ՄԵՍԻԱ</u>

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻՔ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԸ</u>

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք համար 1-5-ում բոլոր այն խնդրանքները որոնք սկսվում են «թող . . . »:
2. Ի՞նչ է նշանակում «թող Նա շնորհի քեզ քո սրտի ցանկությունը»:
3. Արդյո՞ք համարը 5-ը ակնարկում է ռազմական հաղթանակ: Ինչո՞ւ:
4. Ո՞վ է ՅԱՀՎԵԻ օծյալը: